Լուկա Կայոլի

ՄԵՍԻ

Լեգենդ դարձած տղայի պատմությունը

Թարգմանությունն անգլերենից՝
Լիանա Զաքարյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2019

Bookmark

ԳԼՈՒԽ **1**

Ռոսարիո

Զրույց Սելիա և Մարսելա Կուչիտինիների հետ

- Մսավաճառից մի ամբողջ ազդրամիս եմ գնում կամ ընդամենը մի կտոր: Տավարի մսի այս կտորներից Բարսելոնում էլ կա, բայց չգիտեմ՝ ինչ է կոչվում: Ամեն կտորի վրա աղ եմ ցանում, թաթախում ձվի ու հացի փշուրի շաղախի մեջ, այնուհետև տապակում մինչև նուրբ ոսկե-շագանակագույն երանգ ստանալը, հետո էլ՝ դնում վառարանը: Սոխը կտրտում եմ բարակ, հետո մի փոքր տապակում եմ: Երբ այն դառնում է թափանցիկ, ավելացնում եմ կտրտած լոլիկ, մի քիչ ջուր, աղ, օրեգանո և մի պտղունց շաքարավազ: Կրակի վրա թողնում եմ մոտ քսան րոպե: Հենց սոուսը պատրաստ է, լցնում եմ տավարի մսի յուրաքանչյուր կտորի վրա առանձին՝ համոզվելով, որ ամեն կտոր լավ ծածկված է դրանով: Սառնարանից հանում եմ հալած կամ պինդ պանիր և բարակ շերտերով տեղադրում մսի կտորների վրա: Վառարանում թողնում եմ

մինչև պանիրը հալչի: Մնում է միայն կարտոֆիլը տապակել, որպես խավարտ, և *milanesa a la napolitana*-ն [1] պատրաստ է մատուցման:

Լավ խոհարարին բնորոշ կրքով և փորձով Սելիան նկարագրում է իր որդի Լիոնել Մեսսիի սիրած ուտեստը:

- Երբ գնում եմ Բարսելոն, շաբաթը 2-3 անգամ պատրաստում եմ դրանից՝ ամենաքիչը տավարի մսի երեք միջին չափի կտորներով: Գլուխը շոյում եմ ու ասում. «Իմ նեապոլիտանական շնիցելի և մատեի[2] շնորհիվ ես այդքան գոլ խփում»: Լիոնելը պարզ ուտելիք է սիրում՝ շնիցել, բայց ոչ խոզի կամ ձիու մսից, հավի միս՝ պղպեղի, սոխի, լոլիկի և օրեգանոյի սոուսով: Նա անտարբեր է նրբաճաշակ ուտեստների հանդեպ, ինչպիսիք պատրաստում է նրա եղբայր Ռոդրիգոն: Բայց մյուս կողմից էլ Ռոդրիգոն շեֆ խոհարար է և երազում է մի օր իր սեփական ռեստորանը բացել: Նրա համար փորձարկումներ անելը և նոր բաղադրատոմսեր փորձելը սովորական բաներ են, թեև նրա կրտսեր եղբայրը միշտ չէ, որ գնահատում է դրանք:

Գուցե նա քաղցրակե՞ր է:

- Այո, Լեոն սիրում է շոկոլադ ու ալֆախորես[3]: Իսպանիա ուղևորվելիս մեզ հետ շատ քաղցրավենիք ենք տանում, որ նրա պաշարը երբեք չպակասի:

Սելիան պատմում է, թե ինչպես մի անգամ, երբ Լեոն փոքր էր, նրա մարզիչը նրան ալֆախորես էր խոստացել յուրա-

---

[1] Շնիցել՝ նեապոլիտանական ձևով: (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

[2] Արգենտինական ավանդական թեյ:

[3] Alfajores - կարամելի միջուկով ավանդական թխվածքաբլիթ, ազգային դելիկատես է:

քանչյուր գոլի դիմաց, և Լեոն մեկ խաղի ընթացքում 8 գոլ էր խփել: Իսկական խրախճանք:

Սան Մարտին դը Ռոսարիո պողոտայի «Լա Տիենդա» բարում մեկ գավաթ սուրճի շուրջ «Բարսայի» 10 համարի մայրը մեծ խանդավառությամբ պատմում էր իր աշխարհահռչակ որդու մասին: Նա սև մազեր ունի, նուրբ ժպիտ, դիմագծերը հիշեցնում են Լեոյին (թեև ծիծաղելով ասում է, որ Լեոն հոր պատճենն է): Սելիա Մարիա Կուչիտինի Օլիվեյրա դը Մեսսին նուրբ ու փափուկ ձայն ունի: Խոսելիս աչքն անընդհատ գցում է իր դիմաց նստած քրոջը՝ Մարսելային, որն ընտանիքում ամենակրտսերն է և նույնպես ֆուտբոլիստների մայր է: Վերջինիս որդիներից Մաքսիմիլիանոն խաղում է «Բահիա» բրազիլական ակումբում, իսկ Էմանուելը՝ «Վասկո դա Գամա» ակումբում, որը նույնպես բրազիլական է: Մարսելա Կուչիտինի դը Բիանկուչին Լեոյի կնքամայրն է և ամենասիրելի մորաքույրը: Երբ Լեոն վերադառնում է Ռոսարիո, սիրում է նրա տանը ժամանակ անցկացնել:

- Մենք գնում ենք նրան այցելելու կամ զանգահարում ենք տեսնելու՝ ինչպես է: Իմ քույրը, իհարկե, նրան երես է տալիս,- ասում է Սելիան,- Էմանուելն ու նա անբաժան են:

Շատ վաղ հասակից նրանք անընդհատ գնդակ էին խաղում:

- Հինգ տղաներով էին. իմ երեք որդիները՝ Մաթիասը, Ռոդրիգոն ու Լեոն, և քրոջս երկուսը՝ Մաքսիմիլիանոն ու Էմանուելը: Կիրակի օրերին, երբ գնում էինք մորս տուն, նրանք բոլորը վազում էին դուրս և մինչև ճաշ ֆուտբոլ խաղում,- հիշում է Սելիան:

Աղմկոտ խաղեր էին. ֆուտբոլ էին խաղում կամ ոտքով թենիս, և Լեոն հաճախ լացելով տուն էր գալիս, քանի որ կա՛մ

պարտվել էր, կա՛մ տարիքով մեծ տղաները նրան խաբել էին:

– Անցյալ օրը Մաքսին ինձ հիշեցրեց այդ խաղերի մասին,– ավելացնում է Մարսելան: – Ասում էր, որ երբ իրենք բոլորը նորից միասին այստեղ լինեն՝ Ռոսարիոյում, ուզում է խաղ կազմակերպել՝ Մեսսիներն ընդդեմ Բիանկուչիների, ինչպես նախկինում:

Հիշողությունները մեզ տարան դեպի տատիկ Սելիան, նրա եփած համեղ ճաշերը, թխվածքները, կիրակնօրյա ընտանեկան հավաքները և կիրքը ֆուտբոլի հանդեպ:

– Նա էր երեխաներին ուղեկցում մարզումների: Հենց նա պնդեց, որ իմ Լեոյին թույլ տան խաղալ, թեև նա բավական մեծ չէր, ամենափոքրն էր խմբում թե՛ տարիքով, թե՛ մարմնով: Նա միշտ էլ փոքրամարմին է եղել,– պատմում է Սելիան,– բոլորը վախենում էին, որ նրան կտրորեն, որ կվնասվի, բայց տատիկը՝ ոչ: Նա անընդհատ պնդում էր. «Գնդակը փոխանցե՛ք Լեոյին, գնդակը փոխանցե՛ք փոքրիկ տղային: Գոլ խփողը նա է»: Նա մեզ համոզեց Լեոյի համար մարզակոշիկ գնել: Ափսոս, որ չի տեսնում նրան այսօր: Տատիկը մահացավ, երբ Լեոն 10 տարեկան էր: Բայց ով գիտի, գուցե նա վերևից տեսնում է, թե ինչի է հասել, և ուրախանում է իր թոռան համար, որին այդքան շատ էր սիրում:

Ինչպե՞ս է Լեոն սկսել ֆուտբոլ խաղալ: Ո՞վ է նրան սովորեցրել: Որտեղի՞ց են գալիս նրա հմտությունները, գուցե գեներո՞վ է փոխանցվել:

– Չգիտեմ, գուցե հորից, եղբայրներից կամ զարմիկներից է եկել: Ընտանիքում միշտ էլ ֆուտբոլ սիրել ենք: Ես նույնպես ֆուտբոլի երկրպագու եմ: Իմ կո՞ւռքը: Մարադոնան: Միշտ մեծ խանդավառությամբ հետևել եմ նրա կարիերային, գոլերին:

Նա դաշտում բարբարոս էր: Երբ հանդիպեցի նրան, ասացի. «Հուսով եմ՝ մի օր իմ որդին կդառնա մեծ ֆուտբոլիստ, և Դուք նրան կմարզեք»: Եվ տեսեք, թե ամեն ինչ ինչպես դասավորվեց... տեսեք, թե Լեոն ինչերի է հասել...

Զրույցը դադարեց, քանի որ սեղանին դրված բջջայինը զանգեց: Սելիան ներողություն խնդրեց և մի կողմ քաշվեց պատասխանելու: Մինչև այդ Մարսելան նորից սկսեց պատմել երիտասարդ Լեոյի մասին.

- Նա անհավանական էր, 5 տարեկան էլ չկար, բայց կարողանում էր գնդակը բոլորից լավ բանեցնել: Դա նրան դուր էր գալիս, երբեք չէր դադարում խաղալ: Նա այնքան էր հարվածում տան դարպասին, որ նույնիսկ հարևաններն էին խնդրում մի փոքր դադար տալ:

Սելիան ավարտեց հեռախոսազրույցը, նստեց և սկսեց գլխով համաձայնության նշաններ անել:

- Լեոյին սպառնալու վատագույն ձևը նրան ասելն էր, որ այդ օրը չի մարզվելու: «Մա՛մ, ոչ, խնդրում եմ: Ես ինձ իսկապես լավ կպահեմ, մի՛ անհանգստացիր, խոստանում եմ: Թույլ տուր՝ գնամ խաղալու»,- թախանձագին խնդրում էր այնքան ժամանակ, մինչև ինձ համոզեր: Լեոն բռնկվող երեխա չէր, ոչ էլ ծույլ, նա միշտ էլ լավ տղա է եղել, հանգիստ ու ամոթխած, ինչպես հիմա է:

Իսկապե՞ս:

- Այո, իսկապես: Նա փառքի հանդեպ անտարբեր է: Երբ վերադառնում է Ռոսարիո, սիրում է իր զարմիկ Էմանուելի հետ զբոսնել շրջակայքում, Սան Մարտին պողոտայով: Երբ ասում ենք, որ դա հնարավոր չէ, որ այստեղ իր հայրենակիցները հիստերիայի մեջ կընկնեն, երբ նրան տեսնեն, և թույլ չեն